49ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 2276 Կ. ՊՈԼԻՍ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12 25 ՆՈՅԵՄԲԵՐ 1908 — 12 ԹՇ. ՍԱՆԻ 1324–30 ՇԷՎՎԱԼ 1326

منظومهٔ افکار ارمنجه یومی غزته
صاحب امتیازی : (اوهانس فرید)
ادره‌خانه‌سی : باب عالی جاده‌سنده‌در

Մանզումէի Էֆքեար

ԱԶԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՕՐԿԱՆ

Journal Arménien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte 54
CONSTANTINOPLE

ՏԷՐ ՍԻ ՅՆՕՐԻՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՄԷՐԵԱՆ
Որու կ'ուղղուի ամէն գրութիւն

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՊԸ ԱԼԻ ՀԱՅՏԷՍԻ, ԹԻՒ 54

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՏՐՈՒԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆԽԻԿ	ՏԱՐԿՆ.	ՎԵՑԱՄՍ.
Պոլսոյ համար	80 ղրշ.	50 ղրշ.
Գաւառներու համար	108 »	60 »
Արտասահմանի »	25 ֆր.	14 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար տողը 5 ղրուշ, Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ։

'ՄԱՄՈՒԼԸ ԵԶԱՏ Է ՕՐԻՆԱՑ ՍԱՀՄԱՆԻՆ ՄԻՋ»
(ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ, ՅՕԳ. 12)

10 ՓԱՐԱ — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ "ՄԱՆԶՈՒՄԷ„ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ — 10 ՓԱՐԱ

ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀՆԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԲՈՐԴ ՕՐԸ

ՎԵՑ ԺԱՄՈՒԱՆ ՓԱԿ ՆԻՍՏ ՄԸ

ՔԱՌԱՆՈՒՆ ՅԱՆԿԸ

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ - ԵՐԿԱՆՈՒՆ ՅԱՆԿԸ

ՌՎ. ՊԻՏԻ ՎԱՒԵՐԱՅՈՒԻ ԻԲՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԷՋՄԻԱԾԻՆ, 31 Հոկտեմբեր

Այսօր հեռաքրքրութիւնը սուր է և ապշեցուցիչ։ Բոցի ժողովուրդն որ պարզապէս հեռաքրքիր է, պատգամաւորներուն մէջ մահմեդականութիւն կը թրքէ թէ արդեօք խաչ մը պիտի կրնան դարձնել էջմիածնականները։ Սոսր համար պատգամաւորներու մեծագոյն մասը արդէն համաձայնած են ամէն կոակածելի պարագայ բաց ձգել և միանալ քառանուն ցանկին մէջ կոակածելի անուններ չմտցնելու համար։

Ասուն, եւրոպական ժամը 9½ին Մայր-Տաճարի զանգակը հնչաց։ Պատգամաւորները իրենց պաշտօնական սարքով հաւաքուեցան Վեհարան, ուր Թափոր կազմելով, երեկուան պէս, կարգով իջան եկեղեցի։ Աջիւնն կ'երթար Տեղապահ Սրբազանը իր քովը ունենալով Նահանգապետը՝ համազգեստով։ Յետքը Պոլսոյ եկեղեցական պատգամաւոր Աչտա եպս. և յաջորդաբար ամէնքն ալ, իրենց թեկնածու երիցուրեան կարգով։ Երբ ամէնքն ալ եկեղեցի մտան, լուսարարապետ Ղեւոնդ եպս. գոցել տուաւ դուռները և այպէս ընտրութեան գործը պատնիշուեցաւ ժողովուրդին և ընտրողներուն միջև։ Բազմութիւնը սկսաւ թափուիլ եկեղեցիին չուրջը, հասկնալու այն ցանկը ուրկէ պիտի երթային եկեղեցականներ բռնելի Հայոց դահլան վրայ։ Հոկտեմբերի կը կատարէին ասպիսի-զորքեր և նոյն իսկ Թող չէին տար որ Հայ Փակարանին դրան մօտենան մարդիկ։

Եկեղեցիին ներսը ծանրաչուռ հանդամանք մը առած էր։ Իլման սեղանին առջև դրուած էին կարմիր մահուտով ծածկուած գրասեղաններ, վրանին Թուղթ ու գրիչով։ Պատգամաւորները կարգով գացին սեղ բանելու այդ գրասեղաններուն առջև, ուր իրենց անունները նշանակուած էին։ Իլման սեղանին հիւդ դէմը դրուած էր նախագահական գրասեղանը։ Նախագահին հիւդ դէմը, աջ կողմը սեղան մը դրուած էր Նահանգապետի և պրոկուրորին համար, իսկ ձախ կողմը սեղան մը Սինօդի քարտուղարներուն համար։ Իլման խորանին առջև ալ սեղան մը կար, որուն երկու կողմը, արծաթի աշտանակներու մէջ մոմեր կը վառէին, իսկ վրան դրուած էր խաչ ու ուսեարան։ Պրոկուրորին և նոյնպէս սեղաններուն վրայ կային Ա) Պոլսոյ Պատգամաւորներու Բերթեր. Գ) Բոլոր ազարարական պատգամաւորներու անուններու ցուցակը. Դ) Էջմիածնի միաբանութենէն և վանքէն մասնակցողներու, ինչպէս նաև դուրսէն եկած հոգեւոր պատգամաւորներու անուններուն ցանկը։

Տեղակալ Սուրէնեան եպս. նստաւ նախագահական սեղանին առջև։ Աջ կողմը կային Պոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքութեանց և Աղթամարայ Կաթողիկոսութեան եկեղեցական պատգամաւորները, և յաջորդաբար բոլոր եկեղեցականները իրենց ձեռնադրութեան աւագութեան կարգով։ իսկ ձախ կողմը՝ աշխարհական պատգամաւորները։

Ժողովը բացաւ Սուրէնեան եպս. «Հայր մերով», որմէ ետք, երկու եպիսկոպոսներ փոխն ի փոխ արտասանեցին 28։ Սաղմոսը՝ «Զգործս ձեռաց մերոյն» ամբողջովին։ Յետքը ուրիշ եպիսկոպոս մը բռնաւ «Ի մէջ աստուածոց», և առաջի աստուածնկալ և պայծառացեալ ասրբ նշանաց և ասրբ սեղանոյս, խնդրեալ...» և այլն։ Ապէց ետքը ալ ուրիշ եպիսկոպոս մը կարդաց սաղմոսքը։—

«Հովիւ քաջ, Հովիւ բարի, և յուիսեանական, նայեա՛ց և այց որս՝ բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով։ Զի քո առաջի կամք, Տէ՛ր, և առ ի Քէն զարմանութեանդ և գթութեանդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնա՛, զամենեսեան խմասա՛ցո՛, զամենեսեան լուսաւորեա՛, և ամենեցուն պարգևեա՛ զերկնից արքայութիւնդ։ Վասն զի Դու ես Տէր կենաց և Աստուած զորմութեանց և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»։

Այս աղօթքներէն ետք, Տեղակալ եպիսկոպոսը կարճ քարոզ մը խօսեցաւ, բացատրելով ժողովին կոչման վեհութիւնը։ յորդորեց որ նկատի առնուին եկեղեցիին արքան սեղանները՝ որպէս զի ընտրեալ պատուաւոր և բարձր եկեղեցական մը, այս գործին մէջ հրաւէր կարդաց Խղճի ձայնին անսալ, հեռու մնալ արտաքին դրդումներէ, վնասակար երկպառութիւններէ և անձնական նկատողութիւններէ, և ձայն տալ ամենէն արժանաւորին, քանի որ ապագայ Կաթողիկոսին կախում ունի ոչ միայն Մայր-Աթոռի բարօրութիւնը այլ նաև ազգային չահերը։

Նոյն, կատարեցաւ Մոլասվալաքիոյ (Ռումանիա) աշխարհական պատգամաւոր Գ. Քալենթարի երդումը։ քանի որ երեկուան արարողութիւնէն ետք եկաւ անոր պաշտօնին վերաբերեալ պաշտօնական հաստատիրը։ Այն ալ կրկնց և ստորագրեց բանաձեւը։

Յետոյ պրոկուրոր Գ. Մելիք Օհանջանեան կարդաց Կովկասի քաղաքային կառավարչապետին առաջադրութիւնը ժողովի մասին և նիստը բացուեցաւ։

Գ. Սամսոն Յարութիւնեան, հարցուց պրոկուրորին և Սինօդին թէ եկած պատգամաւորներուն ամէնուն ալ պաշտօնի հաստատութեան պաշտօնաթղթերը օրինաւոր են և առարկութիւն չկա՞յ։ Այս հարցումը ուղղեց, ճիշդ ապագայի բեկանման հաւանականութիւնով, որպէս պատգամաւորները կ'ուզին ամէնէն աւելի զգուշանալ։ Շատ տեղերէ հեռագրական ընտրութիւն եղած է, և թեմականները հեռագրով ծանուցած են իրենց հաւանութիւնը՝ Սինօդին, մինչ պէտք էր ստորագրուած պաշտօնաթուղթեր ունենային պատգամաւորները։ Այս մասին մահմեդէին Թրքահայ պատգամաւորները, թէ ընդունելի պիտի ըլլա՞յ և կամ պատրիարքական ընդհ. տեղեկագիրը պիտի ճանչցուի։ Իրա՞ւ է թէ այս մասին ոչ է առարկութիւն չբրաւ Սինօդը։ ինչպէս չբրաւ կրկին ձայնի խնդրին համար, ասկայն, նկատելով որ կարելի է այդ բանը եռաբ մտա փոթթել և խաղ մը դարձնել, հարկ համարեցաւ Ժողովին մէջ պաշտօնապէս խնդիր դնել զայն։

Նախագահ Սուրէնեան եպս. յայտարարեց թէ պատգամաւորներու հանգամանքը քննուած, անոնց օրինաւորութիւնը հաստատուած է և կրնան մասնակցիլ քաւէարկութեան։

Գ. Սամսոն Յարութիւնեան հարց բարձրացուց թէ մամուլի ներկայացուցիչները ինչո՞ւ չեն ընդունուիր։ Պատասխանուեցաւ թէ ժողովի խաղաղութիւնը և վեհութիւնը չվրդովելու համար կողմնակի մարդոց մուտքը արգիլուած է։ Նոյն իսկ ժողովին վեհութիւնը չխանգարելու համար արգիլուած է ժողովականներուն դուրս ելլել ներս մտնել ամբողջ նիստի միջոցին։

Գարեգին եպս.—Թոյլ տանք ինծի որ խօսիմ։ Այս ժողովը օրինական ժողով է, հայրապետական ընտրութեան ժողով է, Հայաստանեայց Նախարարութեան ժողով է. ունինք պարտականութիւններ և չա՞ռ։ Ի էջմիածինը կօրհնուցած է իր դիրքը բարոյապէս, ուժ չունի, կարդ կանոն թանգարած է։ Այս առաջը կեդրոնն է Հայաստանեայց Եկեղեցւոյ, բայց չի կրնար իր այս վիճակով բոլոր եկեղեցեաց առաջնորդել։ ուր է հաւատքը, ուր է ջերմեռանդութիւնը։ Ձեմարանը աշխարհականացած է, Եկեղեցիին անչքութիւնը տեսէք, բարոյական քայքայումը։ հիմակ մեր վրայ կը ծանրանայ այս ամէնը։ և երկրորդ՝ ամարդասիրութիւն ալ կայ։ Ռուսահայերը թանով նստաղ չեն և աւելի են ու այսօր քիչ են ներկայացուցիչներ։ քառաքսակ իշխանութեան պատգամաւորներուն կը ներկայացնեմ այս խնդիրը։ Սրտիս վիշտ եղած է, սա խնդիրն ալ։ Երուսաղէմի Պատրիարքը փոխանորդ կարգած էր Գարեգին վրդ.ը և հիմա նոր հանգիպ մը եկած է, որով ան դարձ հանուեցաւ և տեղը Աչտա եպս. Շեհանը կը նստի։ (Շուտկներ եղան։)

Պրոկուրոր.— Պէտք է պատգամաւորները բան խնդրոյն դասանն և հակիրճ ծանօթութիւնով թեկնածուներին նշանակեն։

Կարապետ վրդ. Տ. Մկրտիչեան.—Աչտա Սրբազան իբր Շուշի Առաջնորդ Թող հանի իւր տեղը նստիլ։

Անարոնեան.—Թող հանդիսաւորապէս եւ հաստատուի թէ Սինօդի կողմէ հաստատուած են լիազօրներ և ըստ այնմ գործի սկսուի, վասնզի հոս հաւաքուած ենք թեկնածուներու վերջնական քաւէարկմանը համար, չէ թէ կարծիքներ փոխանակելու։

Սպանդար.— Ձայնի խնդիր մը՞ ալ կայ. կ'ուզենք հասկնալ թէ քանի՞ ձայնով պիտի մասնակցին պատգամաւորները։

Պրոկուրոր.—Վաղուժամ է այժմէն բան մը ըսել։ Երբ քառանուն ցանկի ընտրութեան սկսուի, և իւրաքանչիւր պատգամաւոր ձայն տայ այս ու այն թեմին, այն ատեն օրէնքի որոմարդութիւնը կը խօսինք։

Եղիազարեանց.—Նախ պատգամաւորաց լիազօրութիւնը հաստատուի և ըստ այնմ գործի սկսինք։

Տեղապահ.—Այո՛, լիազօր են։

Սպանդար.—Ես խնդրում եմ հանկնալ թէ մէկ պատգամաւորի երկու-երեք ձայն ունենալը պիտի ընդունուի՞։

Մեսրովպ վրդ. Տեր Մովսէսեան.—Սինօդը բոլոր պաշտօնական թուղթերու վերաբերեալ հաստատած է։

Սպանդար.—Այս ժողովը որ օրինաւոր է, քանի՞ քուէներով պիտի մասնակցի։

Ս. Յարութիւնեան.—Սինօդից լսելով պատգամաւորաց լիազօրութիւնը, խնդիրը վերջացած կը համարինք. իսկ երկու ձայնի խնդիրը ըստ Պրոկուրորի վերջը. իւրաքանչիւր պատգամաւոր երբ իր ձայնը տայ Թղթին մէջ ըսէ թէ ո՞ր թեմին ձայն կուտայ։ Այպէս իր ներկայացուցած թեմերը միացնելով մէկ ձայն պիտի դայ ապագայ առարկութիւններու տեղի չտալու համար։

Էջմիածնի միաբաններէն ոմանք թէև ուզին օգտուիլ իրենց կրկին ձայներէն, բայց խաւ բաղդեցաւ այս անհատաբերեան դէմ, որպէս անոնք ալ մասնակցեցան միայն մէկ ձայնով։

Դիւանագիրը կարդաց Ռուսահայ, Տաճկահայ, Պարսկահայերի, Եւրոպայի և Ամերիկայի եպիսկոպոսաց անունները։ 13 Ռուսահայ, 21 Թրքահայ, 1 Պարսկահայ, 2 Ամերիկայ, 1 Եւրոպա։

Յանկարծ Աչտա եպս. բողոքեց թէ ինչո՞ւ Օրմանեանը առաջ դրուած է Մատթէոս արքեպ. Իզմիրլեանէ, քանի որ ան Օրմանեանէ առաջ ձեռնադրուած է, ուստի դիրքումնաւոր եղած է։ Գ. Միրզայեան Հայկազն ալ դիտել տուաւ թէ Աղթամարայ կաթողիկոսական տեղապահ Եսայեան եպս.ի անունը մոռցուած է։ Այս անունը ուզեցաւ։ Սպանդար հարց դրաւ թէ ինչո՞ւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան եպիսկոպոսներուն ցանկը չկայ։ Պատասխանուեցաւ թէ որովհետև Կիլիկիա չէր մասնակցած այս ընտրութեան, հարկ համարած էին այդպէս ընել։

Մ. Հայկազն.—Ես կը բողոքեմ սաղ դէմ, կ'ուզեմ որ երկու աթոռներուն միջև ցուցակ մը ծագի։ Կը խնդրեմ որ բաղդս տրամադրուի։ կ'ուզենք հասկնալ նաև թէ ինչո՞ւ այս եկեղեցիին մէջ, որ Հայաստանեայց վեհ աստուան է, Գ. Պրոկուրորը ռուսերէն կը խօսի։

Պրոկուրոր.—Այդ տեսակ հարցեր դնելու տեղը չէ։ Ընդունուած օրէնքին որոմարդութիւնն է այդ։ Պէտք է անմիջապէս քաւէարկութեան սկսինք։ Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք է տաքի ելլէ, հրապարակաւ տայ իր թեկնածուներուն անունները և անկէ ետքը դայ ստորագրէ իր բռած գրուածքին տակ, որպէս զի մարտնութեան տեղի չմնայ։ Թուղթ մը՞ալ Տեղապահին քով կը դրուի և հոն ալ կ'արձանագրուի ու կ'ստորագրուի։

Յակոբ Աւոս եպս.—Կուզենք Գ. Պրոկուրորէն հասկնալ թէ ռուսերէն պիտի գրուի թէ հայերէն։

Պրոկուրոր.—Մենք ռուսերէն պիտի գրենք և ստորագրութեան ատեն ալ անգամ մը պիտի կարդանք. իսկ Տեղապահին քովինը հայերէն պիտի գրուի, իսկ ստորագրութիւնները հայերէն։

Մեսրովպ վրդ.—այս կէսը աւելի ճշգրիտ պարզեց։

Բարթուղիմէոս եպս.—Բառանուն ցանկի պատրաստութիւնը պէտք է հայերէն գրուէր։

Վիճաբանութիւնները դադրեցան և սկսաւ ձայնատուութիւնը, որս միջոցին ընդմիջումը արգիլուած էր։ Բարթուղիմէոս կրաստրագրումին սկսաւ կարդաց պատգամաւորներուն անունը. անոնք ոտքի ելան և մէկիկ մէկիկ տուին իրենց թեկնածուներուն անունները որոնք արձանագրուեցան Տեղապահին և Պրոկուրորին կողմէ։ Ամէն պատգամաւոր իր ձայնը տալէն ետք գնաց ստորագրել այդ երկու թուղթերը և եկաւ տեղը նստաւ։

Իբր կրաստրագրումն թեմ՝ Պարսկահնդկաստանի Թեմին պատգամաւորը Տօքթ. Պաղլի իր ինքնասիրաբ ոտքի ելաւ և յայտարարեց.

—Ես պատգամաւոր, կաթողիկոսութեան ընտրելի կը ներկայացնեմ Ա. Ամեն. Մատթէոս արքեպ. Իզմիրլեան, իբր ազգօգուտ մի անձնաւորութիւն. Բ. Ս. Դիշէ եպս. Դուրեան. Գ. Մեսրովպ արքեպ. Սմբատեան. Դ. Յովհաննէս արքեպ. Շերակունի։

Շերակունի եպս. ոտքի ելլելով յայտնեց թէ ինք կը հրաժարի։ Ասոր վրայ Տօքթ. Պաղլի իր ձայնը Գրանտիերեան Գրիգոր եպս.ի տուաւ։

Ս. Յարութիւնեան.—Բանի որ Շերակունին կը հրաժարի պէտք է որ արձանագրուի։

Պրոկուրորը Տօքթ. Պաղլի ընտրութիւնը կարդաց և ան ստորագրեց։

Զանազանութիւնը շարունակուեցաւ։ Ոմանք երեք անուններ միայն տուին, ասոր վրայ Պրոկուրորը դիտել տուաւ թէ սխալ է այս, վասն զի այպէսով փոխանակ քառանուն ցանկի եռանուն ցանկ կ'ունենանք։

Ս. Յարութիւնեան.—Այլ ես եռանունի չի մնար, քանի որ մէկ քանիներ 4 անուններ տուին։

Բարթուղիմէոս եպս.—Գ. Պրոկուրոր, թեկնածուներու մասին կարծիք մը չի յայտնած ցանկը կը կազմուի։

Ս. Յարութիւնեան.—Ամէն պատգամաւոր պիտի խօսի իր կարգին։

Բարթուղիմէոս եպս.—Գ. Պրոկուրոր, բացատրութիւն կ'ուզենք այս մասին։

Պրոկուրոր.—Յունվարի 18րդ յօդուածը պարզ կը ցուցնէ թէ իւրաքանչիւր պատգամաւոր երբ իր կարգին կ'երթայ թեկնածուներու անունները կուտայ, այն ատեն իր ընտրելիները պաշտպանելու և կարծիք յայտնելու իրաւունք ունի. երբ կարգը ձեզի դայ, իրաւունք ունիք խօսելու. իսկ հիմակ ոչ։

Թեկնածուներուն հրաժարելուն և չը հրաժարելուն մասին խօսքեր կը խօսուին։

Պրոկուրոր.—Պէտք է որ Գրանտիերեան և Սմբատեան ազգասիրասիրները աւելորդ յայտնեն թէ պիտի հրաժարին թէ ո՛չ, վասն զի վերջին երկուսն ցանկ մնալու պարագան մէջտեղ չը գայ։

Մաքրուս վրդ. Մաքրուսեան.—Երբ առաջարկեն չէրաժարեցան, ըսել է կ'ընդունին։

Պրոկուրոր.—Ցեռայ իրաւունք չեն կրնար ունենալ, ուստի ուրիշ մը ընտրուիլ։

Գրիգոր Ճուպար.—Երբ այժմէն չեն հրաժարիր վերջն ալ պէտք չէ հրաժարին երբ նստաղ քաւէ առանն։

Բարթուղիմէոս եպս. և Սպանդար այս մասին զանազան կարծիքներ յայտնեցին և կոչուցուցին թէ պէտք չէ հրաժարին երբ նստաղ առանն։

Ս. Յարութիւնեան.—Որովհետև քառանուն ցանկի չորս անուններէն երկուքը բացակայ են ներկուքը ներկայ, մենք ներկաներէն կը խնդրենք որ իրենց հաւանութիւնը յայտնեն թէ կ'ընդունէ՞ն թէ ոչ։

(Ձայներ քիչ Սամսոն Յարութիւնեան յանուն ժողովի իրաւունք չունի խօսելու)։

Սպանդար.—Իրաւունք չունինք անանք բանադատելու թէ թող այժմէն խօսին, մարդ ազատ է ընտրուելէ յետոյ ալ հրաժարուելու։

Երուանդ Վրդ.—Ոչ ոք իրաւունք ունի այդպէս բանադատելու։

Բարթուղիմէոս եպս.—Գ. Պրոկուրոր, իմ առաջարկս չատ պարզ և կարճ է, եւ օրէնքով պիտի ներկայէ։ (Իր առաջարկն էր դարձեալ Նախագահը խօսծները)։

Պրոկուրոր.—Տեղապահէն խնդրեցէք։

Բարդուղիմէոս եպս. խօսքը Տեղապահ Սրբազանին կը ներկայէ։ Ամենակներ, ձայներ ընդդէմ Բարդուղիմէոսի առարկութեանց։ Անհանգստանք կը մնայ Բարդուղիմէոսի առաջարկները։

Ընտրութիւնը նոյն շարունակուեցաւ։ Բուէներու խնդիրը այպէս բաժնուեցաւ, Մեծ մասը Իզմիրլեան, Դուրեան, Սմբատեան և Գրանտիերեան։

Երկրորդ մաս մը միայն Իզմիրլեան եւ Դուրեան։

Երրորդ մաս մը Իզմիրլեան, Դուրեան. Յովհաննէսեան, և Յովհաննէսեան։

Փոքր մաս մը միայն Իզմիրլեան։

Փոքր մաս մը միայն Իզմիրլեան և Օրմանեան։

Իսկ Սուքիաս եպս.ի Գարդեան, մի միայն Օրմանեանին, զայն միայն արժանաւոր գտնելով Հայրապետութեան Աթոռին (տ'ր հասկնալու է...)։

Մէկ հոգի Իզմիրլեան, Դուրեան և Ապահանի։

Մէկ հոգի Իզմիրլեան, Սուքիասեանց և Գարդեանց օրինք հրաժարեցան անմիջապէս։

Գարդեւ վրդ.— Գաղեսանի գրաւոր քաւէներուն մասին բացատրութիւն պահանջեց և չէ եկած ըսուեցաւ։

Երուանդ վրդ.—Ինդրեց որ Ռէմմաթի ձայնը Բենկի վրդ.ը տայ, ինք անոր ասած է այս մասին արդէն Ս. Տեղապահին դիմած է

Մատթէոս վրդ.—Ուզեց նաև իրը սինօդի անդամ ձայն տայ. բողոքներ եղան։

Գրիգոր.—Նշանակեր թէ եր մէկը ատարակի մէջ երկու անգամ ստորագրէ երկու ձայն չը նշանակուի։

Ամէնէն վերջը իր քուէն տուաւ Տեղակալ Սուքիասեան Եպս., որ հանդիսաւոր կերպով յայտարարեց թէ Հայ Եկեղեցին ներկայ հանգամանքներուն մէջ իր միակ ընտրելին է Իզմիրլեան Սրբազանը։

Ընտրութիւնը լրացաւ։ Մասնակցած էին 78 քուէարկող։ Բաղդաւորութեան ոսան և արդիւնքը հաղորդուեցաւ նոյնպէս.

1. Մատթէոս Արքեպս. Իզմիրլեան 77 քուէ, 28 կրկին ձայն, 2. Եղիշէ Եպս. Դուրեան 60 քուէ, 25 ձայն, 3. Մեսրոպ

ԹԵՐԹՕՆ "ՄԱՆԶՈՒՄԷ„Ի — ԽՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ (88)

ԲԱՆՏԷ ԲԱՆՏ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բ.

Խմբապետը մերկացուց իր դաշոյնը, երկոյնքովը կրթնցուց զայն լրտեսին պարանոցին. փաղաքելու վրայ էր, երբ որ սա, աղերսի մարմրան նշոյլ մը պղտոզող բիբերուն մէջ, բացու բերանը, խօսիլ փորձեց, աղաչել որ եթէ ո՛չ իր կեանքին, գոնէ խնայուէր իր ընտանիքին, անչափահաս զաւակներուն, բայց լեզուն չկար բերանին մէջ. խուլ անիմանալի, վայրենի ձայնարկութիւն մը լսուեցաւ միայն. Նայեցաւ, նայեցաւ ողորմ ողորմ, գութ հայցող բիբերը կայծկլատցին վերջին անգամուան համար։

Սակայն կոյր էր, չէր տեսներ, խուլ էր, չէր լսեր խմբապետը, որ նոյն պահուն կառչած էր իր սեւեռուն գաղափարին. մե՛կ կիրք ունէր, մե՛կ մտածում. — վրէ՛ժ, արդա՛ր վրէժ. հեռեւաբար գութը կը լռէր, չէր կրնար խօսիլ այն օրին, որ քարացած էր, կրանիթ էր դարձեր այն պահուն. Շամնց Փանոսը վրէժ կ'ուզէր ամենայնիւ ու գութը ցնորամտութեան համանիշ կը համարէր։ Բռնեց լրտեսին գլուխը ձախ ձեռքովը, փաթթեց մազերը, ոլորեց, ուիին մէջ տուաւ. իսկ աջովը սեղմուրեց դաշոյնը կզակին տակի կոկորդի դամին վրայ։ Մէկ շարժում, և ահա՛ դաշոյնը ասպց, թաղուեցաւ վզին լայնքը։ Արիւնը ժայթքեց։ Փոքրասա՛ծ էր։ Դեռատիս զինուած ոգեղողի մը պէս, թեւաթափ թռուցաց, վեր վեր նետուեցաւ ու գետին ինկաւ, ի վերջոյ ասրածուեցաւ հանդարտ, անշարժ, աղբիւսին վրայ, արիւնաթաթաւ. քանի մը տասնեակ վերջերու լայն բերաններէն սեւ, կարմիր արիւնը կը հոսէր, պղտոզած բիբերը՝ կէս կարուած գլխուն վրայ հակող դահիճներուն կը յառէին։

Դահիճները դեռ հոն կը պատէին, հոն, Օսմանի գլխուն վերև, ըմբշխնելու հաղթանակներուն անուն հեշտանքը։

Ու լրտեսը կը խորդար ընդհատ խաղաւորք մը. կը խորդար, արիւնի գլորչիներէն ու աղբերու հոտէն գինովցած...։ Հանդիսինը փոխուեցաւ ֆշոյի. օձի մը պէս կը գալարուէր ան, որ իր ողջութեանը՝ խաղաթ, թաւնուած էր անմեղները։ Հա՛ն էր Մահը, մօտեցաւ, դպաւ անոր, ու հանգիսինը դադրեցաւ, լռեց լրտեսը։ Մեռա՞ծ էր, այո՛, և, ապահովապէս։ Խմբապետը, անգամ մըն ալ նայեցաւ դիակին, յետոյ դուրս ելաւ սենեակէն, իր կարիճ ընկերները ձգեց հոն՝ ուրիշներ ուղղեց իր քայլերը դէպի վանքը։ ուր անարարկոյս կը սպասէր Տ. Կարապետ եպիսկոպոսը։

Գ.

Գարարի պէյ դեռ կը սպասէր Զեթունի կառավարական պաշտօնատան մէջ, բայց Օսման չէր վերադառնար։ Դայմագամի փոխանորդին կասկածները կ'աւելնային, քանի՛ ուշնար լրտեսին վերադարձը։ Ա՛լ չը կրնալով երկար տանն սպասել, ի վերջոյ ասրիկան զինուոր մը ղրկած էր, ասոյդ լուր մը բերելու համար։ Սա, Ս. Փրկիչ դացած էր ու հոն ո՛չ եպիսկոպոսը, ո՛չ Ղեւոնդ քահանան, ո՛չ ճգնաւոր Աբրահամը, ո՛չ ալ Սղիսարեթ քոյրը գտած ըլլալով, մենասանի պահապանին հարցուցած էր թէ՝ Օսման չալուշը հոնդիպած էր վանքը։ Պահապանին հաստատական պատասխանին վրայ, ահապարած էր, մտքը չիկնած, վերադառնալու Զեթուն, թերեւս համրան Օսմանի հանդիպելու յուսով։

Այս ասրիկան զինուորը Հայ մըն էր, Քաւաքաւանց Մանուկ, որ տարիներէ ի վեր կառավարութեան դուռը կը ծառայէր. ծեր, խորամանկ աղուէս մըն էր ան, ուր հաստատութեան ու փոքառութեան աէր։ Շաբաթներ առաջ իր ականջներովը լսած էր փաշայներու մէջ տարածուած չչուկները, անկիւններու փսփսուքները, լրտես Օսմանի դէմ ընդհանուր դժգոհութեան ձայները. հեռեւաբար, իրաւունք ունէր կասկածելու և չարաշուչակ մեկնութիւններ տալու անոր յապաղումին։ Այս սեւ կասկածներով ու մտածումներով հագած էր ուրէն Գաղ-Աղբիւրի կամուրջը։ Հաղիւ թէ անցած էր կամուրջէն ու Մարանց փողոցը մտած, արիւնի հոտ մը բռնեց իր քիթը. լուցկին հանեց, ուիկա մը վառելու համար և մութին մէջ նշմարեց փոքրիկ ատաղ մը, որ կը հոսէր Մարանց ախոռին դռնէն. մօտեցաւ ու տեսաւ Օսմանի դիակը...։

Հակցաւ, շարթներէ ի վեր խօսուած, կրկնուած ու վճռուած տեսիլը գործադրուած էր։ Օսման սպանուած էր։ Գոհ մը ասկաց, չուարեցաւ, ու հոն, դիակին քով արձանացած կեցաւ. յետոյ, մտածեց վեր ելլել տանդաբէնը, տեղիներուն իմանալու համար իրականութիւնը։

Դռները փակ էին, ո՛չ ոք կար, ասոնք պարպուած էր իր բնակիչներէն, որոնք իրենց ալիսանները չուած էին ալիսիութիւն։ Մանուկ սկսաւ մտամբ։ կը խորհէր թէ՝ վանդաւոր էր Օսմանի դիակը հոն թողուլ, տեսակ մէջ. անեղծիները կրնային ոստիկանական կասկածուիլ իբր մարդասպան, մինչդեռ ինք լաւ կը ճանչնար տեղին հեղինակները, որոնք արձակ համարձակ կը պարաւին քաղքին մէջ։ ասանց վախնալու կառավարութեան հետապնդումներէն։ Ուստի, պատրաստ հանդիսիելի առաջ, մտածեց դանել փոխասական կարիքներն մէկը խորհուրդ տալու և թնդրելու համար որ լրտեսին դիակը գիշերով դուրս հանեն ու անհետացնեն. կամ գտնէ, քովի ձորին մէջ նետեն, անցորդներու աչքերէն հեռու։ Ու դառ. փոխասականներէն մեկուն եղբայրը, որ այն փողոցի մօտերը կը բնակէր։ Ասոր ականջին փափաց եղելութիւնը, յանձնարարեց չուտով գործադրել ինչ որ անհրաժեշտ էր ու ինք ուռապարեց դէպ ի պղատ։

Գարարի պէյ կը սպասէր դեռ։ Ոստիկան զինուորը մօտեցաւ ու իմաց տուաւ թէ՝ Օսման չէր հանդիպած համան, և թէ՝ Ս. Փրկիչի մենաստանին մէջ ո՛չ եպիսկոպոսը տեսած էր, ո՛չ Ղեւոնդ քահանան և ո՛չ ուրիշ մէկը. թէ՝ միայն վանքին պահապանը, ծերուկ մը, հաղորդած էր իրեն՝ Օսմանի հոն հանդիպումը, քիչ յետոյ իր վերադարձը։

Դայմագամին փոխանորդը, իր կասկածներուն մէջ բոլորովին հաստատուած, հրամայեց ուրիշ ասրիկան մը չուտով երթալ Օսմանի տունը. ընտանիքին հարցնել թէ՝ վերադարձա՞ծ էր ան։ Ոստիկանը ձեռնունայն ետ եկաւ։

Սակայն, տխուր լուրը կայծակի արագութեամբ տարածուած էր Զեթունի մէջ. ամէն մարդ կը փափաք տեսիլը։ Գարարի պէյ միայն տեղեկութիւն չունէր, կը սանջուէր չարաշուչ կասկածներէն։

Գիշերուան խորունկ լռութեան մէջէն յանկարծ ահազանգի ձիչ մը պատեց համատարած մթութիւնը...։

Ձիչը ասլարական ձիչերէն չէր, որոնք յաճախ կը լսուին, ա՛ւ է վանդի մը գոյութիւնը դուժելու համար. կնոջ մը, յուսահատ կնոջ մը վայնասունն կը նմանէր ան, որ քանի՛ մօտենար, աւելի հասկնալի կըլլար։

«Օսմա՛ն, Օսմա՛ն» արձագանգը կը զարնէր ականջներուն, դող ու սոսկում արթնելով բոլորիքը, ու կը մօտենար աղաղակը։

Գալուան դուռը կեցած, մարդերը փեռեալով ու ինքզինք պատերուն զարնելով, մերթ դեսին թռչակելով կը կանչ, կը հեծեծէ ու կը ճչէ. «Դայմագա՛մ, դայմագա՛մ, ա՛ւբ տարիր Օսմանս, Օսմա՛նս կուզեմ, քնե՛ կուզեմ, անգո՛ւթ, քնե՛»։

(Շարունակելի)

Արքեպսկ. Սմբատեան 35 քուէ, 15 կրկին ձայն, 4. Գրիգոր Արքեպսկ. Գառնակերեան 35 քուէ, 15 կրկին ձայն։

Բացարձակ առաւելութեամբ քառասնուն ցանկը կազմուեցաւ։

Իսկ մնացեալ քուէները սապէս բաժնուած էին.—

Ս. Յովակիմեան 9 քուէ։
Մ. Օրմանեան 9 քուէ։
Գ. Յովհաննէսեան 6 քուէ։
Ե. Ապահունի 1 քուէ։
Ս. Սանասարեան 1 քուէ։
Յովհ. Խաչերդեան 1 քուէ։
Տիմոթէոս Սարգիսեան 1 քուէ։

Այս կաթողիկոսական ընտրութեան մասնակցած են 78 անձ, որոնք կը ներկայացնէին 106 ձայն։ Իսկ բնաւ չեն մասնակցած Կիլիկիա, Վասպուրական, Մալաթիա, Թիֆլիս և Արծկա, Դերջան, Զմբաշ, Աբծնի, Սղերդ, Եդեսիա և Պոլսոյ, այսինքն ասոր Թեմեր։ Միայն ասոնցմէ Մալաթիոյ, ազգային պատգամաւոր ընտրուած է Մելիք Ազարեան և Դերջանի պատգամաւոր՝ Մեղաւորեան, սակայն չի կրցան գալ Էջմիածին։

Անհատական մասնակցող պատգամաւորներու ցանկը և իրենց ասած ձայները.—

Սիսոյ Ս. Էջմիածնի

Գէորգ Ա. եպս. Սարգիսեան, կաթ. Տեղակալ՝ Իզմիրլեան։

Յովհաննէս Ա. եպս. Շիրակունի (իբր ներկայացուցիչ Պարսկահնդկաստանի Առաջնորդութեան) Իզմիրլեան, Դուրեան։

Յուսիկ Ա. եպս. Մալխասեան, Իզմիրլեան, Սահակ Սանասարեան, Տիմոթէոս Սարգիսեան և Աղթամարի Տեղապահ Խոսրեղեան։

Սահակ վարդապետ Ամատունի, Իզմիրեան։

Մեսրոպ վրդ. Տէր Մալխասեան (Նաև իբր պատգամաւոր Աղթամարի, Բզնի, Տիրապէգիրի) Իզմիրլեան, Դուրեան և Սահակեան Յովակիմեան։

Յուսիկ վրդ. Զոհրաբեան Իզմիրլեան, Օրմանեան։

Մաթէոս վրդ. Մարգիսեան (Նաև պատգամաւոր Նիկոմիդիոյ) Իզմ., Դուր., Սուքիաս Պարզեանց և Սարգիսեանց։

Բարգէն վրդ. Ադալեան, Իզմ., Դուրեան։

Պատգամաւոր Միաբանութեան Ս. Էջմիածնի

Մեսրոպ Ա. եպսկ. Սմբատեան, Իզմիրլեան։

Սուքիաս Ա. եպս. Պարզեան, Օրմանեան։

Գրիգոր Ա. եպս. Գառնակերեան, Իզմիրլեան, Դուրեան։

Բարթուղիմէոս եպս. Գէորգեան, Իզմիրլեան։

Ղեւոնդ եպս. Յովակիմեան, Իզմ., Օրմ., Դուրեան։

Գրիգորիս վրդ. Տէր Յակոբեան, Իզմ., Օրմ., Յովակիմեան։

Հայեակ վրդ. Արշաբունի, Իզմիրլեան։

Պատգամաւոր Պարիսի Միաբանութեան

Աշոտ եպս. Շիրեան (Ներկայացուցիչ Երուսաղէմի, Նաև իբր Առաջնորդ Ղարաբաղի) Իզմիրլեան, Դուրեան։

Յակոբ Աշոտ եպս. (Պատգամաւոր Պոլսոյ Պարիզաբնակներու և Իզմիրի առաջնորդութեան) Իզմ., Դուրեան, Մեսրոպ Սմբատեան, Գր. Գառնակերեան։

Հոգեւոր պատգամաւոր թեմից Հայոց

Առաջնորդ Եղեւանայ, Հայեակ վարդապետ Իզմ.։
» Վրթանէս, Գարեգին Ա. եպս., Իզմ.։
Առաջնորդ Շամախու Անանիա Ա. եպս.՝ Իզմիրլեան, Դուրեան, Օրմանեան։
Առաջնորդ Նոր Նախիջեւանի և Գեւորգիոյ լիազօր, Մուշէ վրդ. Իզմ., Օրմանեան։
Առաջնորդ Ասարխանի Մխիթար վրդ., Իզմ., Դուրեան։
Առաջնորդ Թէոդոսիոյ, լիազօր Մեսրոպ Ա. քհ. Մելեան (Նաև պատգամաւոր Կեսարիոյ) Իզմ., Դուրեան, Յովակիմեան։
Առաջնորդ Անդրիանուպոլսոյ Դանիել Ծ. վրդ. Յակոբեան, Իզմ., Դուրեան։
Առաջնորդ Տրապիզոնի, Էմմանուէլ վրդ. Գալեան, Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Առաջն. Ճանիկի, Սահակ Ծ. վրդ. Օտաբաշեան, Իզմ., Դուր., Սմբ., Գառնակերեան։
Առաջնորդ Շապին-Գարահիսարի, լիազօր Ներսէս Ծ. վրդ. Պարխանեան (Նաև պատգամաւոր Մուշի ու Բաղէշի) Իզմ., Դուրեան։
Առաջնորդ Ամասիոյ և Մարզուանի, Մամբրէ քհ. Ֆախիրեան, Իզմ., Դուր., Յովակիմեան, Յովհաննէսեան։
Առաջնորդ Եւդոկիոյ լիազօր Գրիգորիս վրդ. Գալագեան (Նաև պատգամաւոր Գանձակի-Պալուքեսերի), Իզմ., Դուրեան, Սմբ., Գառն.։
Առաջնորդ Սեբաստիոյ Թորգոմ Ծ. վրդ. Գուշակեան, Իզմ., Դուր.։
Առաջնորդ Կարնոյ լիազօր Նրուանդ վրդ. Տ. Մկրտիչեան, Օրմ., Իզմ.։
Առաջնորդ Վանայ, լիազօր Մեսրոպ քհ. Ճանիկեան (Նաև պատգամաւոր Լիմի և Կուսցի), Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Առաջնորդ Բասենի (Հասան-Ղալա) Վահան վրդ., Իզմ., Դուր., Գառն.։
Առաջնորդ Գայազիտի, Մկրտիչ վրդ. Զելզասեան, Իզմ., Դուր.։
Առաջնորդ Բարերդի, Գարգէս վրդ. Դանիէլեան, Իզմ., Դուր., Յովհաննէսեան, Եղնիկ Ապահունի։
Առաջնորդ Երզնկայի, Նրուանդ վրդ. Բերտահեան (Նաև պատգամաւոր Կամախի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Առաջնորդ Բալուի, լիազօր Գէորգ Ծ. վրդ. Ալպանեան (Նաև պատգամաւոր Խարբերդի) Իզմ., Դուր., Յովհաննէսեան, Վալիսան։
Առաջնորդ Զարսանճագի լիազօր Գնել Ծ. վրդ. Գալէմքեարեան (Նաև Զմկնծագի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Առաջնորդ Արաբկիրի, լիազօր Գեւորգ քհ. Գասեան (Նաև Ակնոյ) Իզմ., Դուր., Յովհաննէսեան, Յովակիմեան։
Առաջնորդ Ղալաթիոյ (Էնկիւրի) Գալուստ քհ. Տէր Գալուստեան, Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Առաջնորդ Եգիպտոսի և Կրէտէի, Մկրտիչ Ծ. Վ. Աղասունի՝ Իզմ., Դուր. Սմբ., Գառն.։
Առաջնորդ Կուտինայի, լիազօր Կոմիտաս վրդ. Սազմոնեան (Նաև Պրուսայի) Իզմիրլեան։
Առաջնորդ Աբգարատկանի, Կարապետ Ծ. վրդ. Տէր Մկրտիչեան՝ Իզմիրլեան։

Աւխարհական Պատգամաւորները

Կաթող. Աղթամարայ, Յակոբ Շահպազեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Երուսաղէմի, Ղազարոս Գօրգս Մելիքեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Պոլսոյ, Ստեփան Թելլիեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Երեւանայ, Վասիլ Եղիազարեան՝ Իզմ. Դուր., Սմբ., Գառն.։
Վրաստանի՝ Սամսոն Յարութիւնեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Ղարսոյի, Համբարձում Առաքելեան՝ Իզմ., Դուր.։
Շամախի, Ստեփան Թաղիանսեան՝ Իզմ., Օրմ.։
Նոր Նախիջեւանի և Գեւորգիոյ, Գէորգ Զուլարեան՝ Իզմ., Օրմ.։
Ասարխանի, Կարապետ Ալահալեան՝ Իզմ., Դուր., Յովակիմ., Յովհան.։
Թիֆլիսոյի, Մկրտիչ Յ. Մէհթիրեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Աղբիսնաւորոյ, Համբարձում Մէնզիլեան (Նաև Զարշանճաքի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Մօլդովալաքիոյ, (Ռումանիա) Գալանթարեանց՝ Իզմ., Դուր.։
Տրապիզոնի, Աւետիս Ահարոնեան (Նաև Խարբերդի) Իզմ., Դուր.։
Ճանիկի, Տիգրան Մարտիկեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Շապին—Գարահիսարի, Արշակ Զօպանեան (Նաև Մուշի) Իզմ., Դուր.։
Ամասիոյ և Մարզուանի, Եփրեմ Իրմանսեան (Նաև Տիրապէգիրի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Սեբաստիոյ, Նազարէթ Տաղուարեան (Նաև Եւդոկիոյ) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Կարնոյ, Աստուածատուր Խաչատրեան (Նաև Բզնի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Վանայ, Գեւորգ Գարամանեան (Նաև Լիմ և Կուսցի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Բասենի (Հասան—Ղալա), Մինաս Զեբազ (Նաև Եգիպտոսի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Պայազիտի, Բաղդասար Քրմոեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Բարերդի, Մանուկ Սիմոնեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Երզնկայի, Յակոբ Շաւարշ (Նաև Քէմախի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Բալուի, Մելքոն Կիւրեան (Նաև Կուտինայի) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Արաբկիրի, Մարտիրոս Քէնդիկեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Ակնայ, Յակոբ Գորեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Կեսարիոյ, Կարապետ Ճամեան (Նաև Եդեսիոյ) Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Ղալաթիոյ (Էնկիւրի), Ալիքսան Թօփալեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Զմիւռնիոյ, Յովհաննէս Մերքեան Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Պոլսոյ, Ներսէս Շէկպէնտէրեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Նիկոմիդիոյ, Յովսէփ Ամիրխանեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Խուլիանուց (Զմկնծագ), Միհրդատ Հայկազն՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Պրուսայի, Սպանդար Սպանդարեան՝ Իզմ.։
Աբարտականի, Մարտիրոս Նազարէթեան՝ Իզմ., Դուր., Սմբ., Գառն.։
Պարկասատանի և Հնդկ. Մինաս Պաղի՝ Իզմ., Դուր., Սմբ. Գառն.։
Ընտրութեան ժիրունքը պատրաստուելէ և ծանուցուելէ ետք, նախագահ Սրբազանը յայտնեց թէ Ժողովը աւարտած է։ Երգուեցաւ «Թագաւոր փառաց Աստուած» շարականը և պսակադրեալ ու «Հայմարը»ով փակուեցաւ այս պատմական ժողովը, ու դուռները բացուեցան, մօտ վեց ժամուան փակուէ մը ետք։

Հետաքրքիր բաժմութիւնը, մեծ ուրախութեամբ լսեց այս արդիւնքը՝ որ Թրքահայ պատգամաւորութեան յաղթանակն էր տարուած Ռուսահայոց և Էջմիածնի մեծ մասին վրայ որ միշտ կը փորձէր ամէն բան չփոխելու և Օրմանեանին ընտրելիութիւնը յաջողցնել։ Օրմանեանականներուն տրուած հարուածը ընկճող էր, գրեթէ լուռ կացած էին։ Իսկ ժողովուրդը, մանաւանդ ձեմարանի ուսանողական տերունդը խանդավառ էին, ասանք ամէնէն աւելի կը վախնային Օրմանեանէն թէ դիրքնք պիտի կրնայուրցնէ, հիվիմոցնէ երբոր գայ։

Անմիջապէս հեռագրուեցաւ այս լուրը ամէն կողմ։ Գառնասնն ցանկին առաջին հեռագիրը ես ստացայ Մանզուսէի համար, երբ դեռ ժողովը երեք ժամ ետքը ցրուած էր։ Հակառակ սոսկալիութեան երբ պահ մը կոմմունի դրան մօտեցած էի, եղերքէն Թուրք մը դուրս քաշուեցաւ, տարի և անմիջապէս հեռագրատան ղրկեցի։

Շնորհաւորութիւնները ստացուեցան Սմբատեան և Գառնակերեան Սրբազաններուն, որոնք այս պահուս ատելութեանց ենթակայ են միաբանութենէն, որոնք դիմելով թէ ի՛նչ ընթացք պիտի բռնեն պատգամաւորները, աշխատեցան Ռուսահայ Եպիսկոպոս դնել չտալ քառանունին մէջ, իբր արժանապատուութեան դէմ վիրաւորանք։ Այսպէս, յարգաբար հրաժարեցան ընտրելիութենէն։ Շերեկունի, Գարլեանց և Սուչէնեան։ Նոյն իսկ լսեր ելաւ թէ Գարդեանց որ մի՛ միայն Օրմանեանին ձայն ասած էր, Սմբատեան ծերունի Եպիսկոպոսին սենեակը երթալով, յանդիմաներ է թէ ինչո՞ւ չհրաժարիր և այսպէս միաբանութեան պատիւը կ'տրատաուրէ։ Սակայն ծերունի բարեմիտ Եպիսկոպոսը անպատասխանութիւն չտուներ այս բանին մէջ։

Այս հրաժարման մասնակցութիւնը կայ։ Եթէ հրաժարին, որդեօք Օրմանեանը պիտի մնէ քառանունին մէջ, քանի որ անոնցմէ անմիջապէս ետքը հաւասար քուէով կուգան Սահակեան Յովակիմեան և Օրմանեան։ Սակայն հաստատուեցաւ թէ հրաժարման պարագային վերջին երկուքին մասին դարձեալ քուէարկութիւն կը կատարուի եղեր։ Այն ատեն դարձեալ Օրմանեանը օնտացնելը դիւրին է և անխուսափելի, այն չանչնչիլ մեծամասնութիւնով որ մերն է։

×

Դիւրը, Տպարանի սրահին մէջ կատարուեցաւ պատգամաւորական ժողով, քննելու համար տպագայ կաթողիկոսին մասուցուելիք զանազան ծրագիրներ, իրենի ձեւով։ Արդէն այս կոգի ծրագիրներ ղրկած էին Ռուսահայ մէկ քանի Թեմերու պատուիրակներու ժողովները. ամէնուն ալ հիմ սա էր թէ եկեղեցական և դպրոցական վարչութեան մէջ աշխարհականները աւելի ուժով ըլլան, հոգեւորականներու ընտրութիւնը թողուի ժողովուրդին ձայնին, եկեղեցական և աշխարհական իրարմէ խրամով ու չահերով բաժնուած չըլլան, այլ իրարու մօտ և փոխադարձ իրարու օժանդակութեամբ, կաթողիկոսը չփակեն և չզրաղեցնեն միայն էջմիածնի ամբողջ հոգերով այլ վարչութիւն մը կազմեն իր շուրջը, ապագայ ընտրութիւններու համար Ռուսահայ Թեմերու թիւը և աշխարհականներու մասնակցութիւնը աւելցնել, կեդրոնական ժողով մը հաստատել Թեմական ներկայացուցիչներէն որպէս զի Ռուսահայոց հանրային գործերը ուսումնասիրէ, և այլն։

Գ. Ամիրխանեան յայտարարեց.— Այս ծրագիրները նոր չեն։ Հանդուցեալ Հայրիկը 906ին կանդակ մը հրատարակեր ըսելով թէ Հայ ժողովուրդ քեզի կը դարձնեմ քու իրաւունքներդ։ Ասոր համար, վերը պարզուած նպատակով, համադատմար ալ գումարեց էջմիածնի մէջ, բայց ներքին և արտաքին սանձարձութիւններ արգելք եղան այդ ազգային ձեռնարկին։ Հիմա այս ծրագիրները կը բաւեն անհատաբար. միթէ աւելի հեղինակաւոր չէ՞ այն գործը որ ակաւ Հայրիկ և ինչո՞ւ դայն հրապարակ չդնենք։ Հայրիկին այդ կոնդակները իր մահէն ետք մինեՏkr պլբը եղան։ Այն կոնդակներով 21էն վեր երկաւեան անհատներու ձայն տալու իրաւունք կը շնորհուէր։ Սահմանադրական աfs էին այդ կոնդակները։ Ի՞նչ իրաւունքով և ի՞նչ դիտումով մեծ մարդուն այդ վերջին մեծ խօսքերը լռութեան դատապարտուեցան։ Կը խնդրեմ որ այս բանը նկատի առնուի, և յոռնկայս յարգելի մեծ հայրենաբէրին դիւտակը։

Բոլոր ներկաները յոռնկայս ընծաներին յարգանք Հայրիկի ոգւոյն։

Ամիրխանեանի յայտարարութիւնը գոյացաց միաբանները որոնք յայտնեցին թէ այս կոնդակներուն մէջ որոշ բան չկար, չիսթ էր, կոնդակները կեցած են, կարելի է կարդալ և ըստ ոգւոյն միաբանութեան մասին յայտնուած կասկածներուն դէմ, զոյս անարդար դատ և ըսին թէ այդ ժողովին ներկայ եղողները գիտեն թէ ինչ պատճառներով ցրուած է։ Վարդապետները նաև յայտարարեցին թէ հանրային գործերուն վարութիւնը հարկ չէ միայն կրօնաւորներուն վրայ թողել, հասարակութիւնը ինքն ալ յանցաւոր է, որովհետեւ բնաւ չհետաքրքրուիր ու եռաքը քննադատելու կ'ելլէ։

Ժողովը անդրադառնալով ներկայացուած ծրագիրներուն, իր համամտութիւնը յայտնեց անոնց իսմաստի մասին և յանձնարարեց դիւանին նոր ծրագիր մը յօրինել որ իբր եղձ մասուցուի ապագայ կաթողիկոսին։

Ժողովէն ետք, Արշակ Զօպանեան բանախօսութիւն մը ըրաւ հեմամտութեան մէջ Նահապետ Քուչակ ժողովրդական հին բանաստեղծին վրայ։

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԻՏԻ ՀԱՍՏԱՏՈՒԻ

ԷԶՄԻԱԾԻՆ, Նոյեմբեր 1

Այսօր վերջին օրն է։ Վերջին վճիռը պիտի տրուի, վճիռ որ որդէն կայացած էր և յայտնի։ Սակայն դիւանագիտական նրբութիւն մը կայ։

—Արդեօք, Էջմիածնի միաբանները, օրենք անտեղեակ դատեցեան մը մէջ են պատգամաւորութեան առջև, նոր փորձով մը պիտի կրնան խանգարել Իզմիրլեանի ասպնջութիւնը։ Ասանք թէև համակիր չեն ու չեն ուզեր ճանչնալ Դուրեանի կարգալութիւնները դուրս իրենց անծանօթ կը հռչակեն, բայց մի՛ գուցէ, վերջին պահուն, իրենց բոլոր քուէները անոր տան (քանի որ Սմբատեանը և Գառնակերեանը երբեք չեն ուզեր իբր բացարձակ անկարողներ) և այսպէս, արդիւնքը սա ըլլայ որ Իզմիրլեան և Դուրեան միաձայն ընտրուելուն, կամ չա՞ս քիչ տարբերութիւնով։

Ասիկա թէև հաւանական չէ, բայց վերջապէս խնդիր մըն է, զոր անհրաժեշտ էր նկատի առնել, որովհետեւ Իզմիրլեանի հաստատելը ապահովելու համար պէտք տեսնուած է որ երկու Թեկնածուներու քուէներուն միջեւ խոշոր տարբերութիւն մը Թողուի։

Արդ, ինչպէս բանալ այդ տարբերութիւնը։ Մանաւանդ որ գաղտնի էր քուէարկութիւնը։ Իմ կարծիքս՝ գաղտնի քուէարկութիւնը այս անգամուան համար բարերարդութիւն մըն է։ Գաղտամատներու մեծ մասին ձայնը տալուելէն ետք է որ միաբանները կուան իրենց ձայնը։ Եւ երբ հրապարակաւ արուէին ձայները, այն ատեն կրնային մէկ կամ միւս կողմը հակել, իրենց նպատակին համաձայն։ Մինչ հիմ գաղտնի է, և կուան ինչպէս որ կը մտածեն, առանց իրարու հետեւման փոխներու վտանգին։

Եթէ հաստատ ձայն ունեցող պատգամաւորները Դուրեանի մասին չան հետաձգելէն կրնար ըլլալ որ միաբանները հակած կ'ըլլային Սմբատեանի կողմը և այն ատեն Դուրեան կը վտանգուէր։ Սա ալ ըսենք թէ միաբանները և ուսանողներն ոմանք միտք կը կանգնին թէ Թրքահայերը Դուրեանը անցընել կ'ուզեն Իզմիրլեանի տեղ։

Այս ամէն հայիները ըլլալով որոշեցաւ որ ատանն տասնրնկոյ պատգամաւոր քուէ չտալ Դուրեանի, իսկ բնաւ քուէ չտալ Սմբատեանի և Գառնակերեանի։

Այս առաւ ալ, բոլոր պատգամաւորները հաւաքուած վեհարանի սրահին մէջ թափօր կազմեցին և ժամը եւ. 10 ակէսին գացին տաճար, որուն դռները դարձեալ խարիսխուեցան։

Կատարուեցան նոյն ազոթքները ու մաղթանքները որ եղած էին երեկի նոյնին մէջ։ Նախագահ Սարգիսեան եպս. դարձեալ քանի մը խօսքերով գործին վերամբարձութիւնը յեշուեց։

Կարդացուեցաւ բազմ մը գրուած թղթեղիներու եպս.է, որ կը երկնէր ելեկի խօսքերը թէ կաթողիկոսական ընտրելիներու կենսագրութիւնը հարկ էր ընել քուէին առաջ։ Սպիսկոպոսը այսօր նիսաթ չէր եկած։

Ս. Յարութիւնեան.— Մանրամասնութեանց մանել պէտք չէ, ինք արդէն երեկ խօսեցաւ և պատասխան տաւ, պէտք է անհետանք թողուլ։

Գալանթար.— Բուէարկութենէն առաջ պէտք էր ընել դիտողութիւնը որ գործնական ալ չէ, պէտք է անելի մեր։

Տեղապահը յայտարարեց թէ ամէն պատգամաւոր մէկ ձայնով պիտի մասնակցի։

Գրիգուրոր.—Տէրութենէն արուած հիմնական օրէնքին մէջ ցուցմունք մը չկայ, միայն հրահանգներու մէջ կայ թէ քառանուն ցանկին կրնան մէկէ աւելի ձայնով մասնակցիլ, բայց ոչ երկանուն ցանկին մէջ։ Բարձր հրամն մը արդէն 1884ի ընտրութեան ատեն ճշդած է այս կէտը։

Ձեռնարկուեցաւ քուէարկութեան։

—Քննիչ կ'ուզենք, գոչեցին քանի մը ձայներ, բայց անհետանաք թողուեցաւ։

Սահակ վրդ. Օտապաշեան.— Այսչափ տարիներէ ի վեր գրեթէ օրէնքի կարգ անցած էր բաց քուէով մասնակցիլ, բայց հիմա ազդեցութիւն կը բանեցնի և այս իրաւունքն ալ զանց կ'ուզեն։

Սուքիաս վրդ. Տ. Մկրտչեան.— Բուէարկութեան օրինաւորութիւնը արդէն այսպէս է։

Գրիգուրոր.— Բարձրագոյն հրամանով արդէն որոշուած է գաղտնի քուէարկութիւն, հետեւաբար հարկ չկայ այդ մասին վիճիլ։

Մէջտեղը դրուեցաւ քուէատուփը, որ երկու ծակ ունի, մին ներսակ և միւսը ան. ծածկոցներով ծածկուած։ Իւրաքանչիւր ընտրող կ'երթար կարգաւ Տեղապահին ձերմակ գնդիկ մը առնել և եթէ արուած անունը իրեն ընտրելին էր, կը ձգէր ձերմակ ծածկոցով սրկին մէջ։

Այսպէս նոթ տրուեցաւ Իզմիրլեանի անունը որուն համար ամէնքն ալ իրենց «ընտրեմ»ի և «ոչ-ընտրեմ»ի գնդիկները ձգեցին։ Երբ կարգը Դուռնակերեան եպս.ի եկաւ, Գրիգուրոր դիտել տուաւ թէ չի կրնար ինք քուէի մասնակցիլ քանի որ քառանուն ցանկին մէջ մտած է, ըստ 26րդ յօդուածի։ Ասոր դէմ բողոքուեցաւ, ոմանք պաշտպանեցին։

Ս. Յարութիւնեան.— Իրաւունք ունին թեկնածուներն ալ մասնակցելու, բայց ոչ իրենց անուան ատեն։

Գրիգուրոր.— Բայց իւրաքանչիւր թեկնածու պիտի չնայ որ իրեն հետ նշանակուածներուն քուէ չտայ որպէս զի անոնց ձայնը պակի։

Բարգհն վարդ.— Բայց օրէնքին հիմքը թարգմանութիւնը բացորոշ կը արտայայտէ թէ քուէարկուները բացի իրենց անուան ատենէն, միւսներուն կրնան մասնակցիլ։

Ս. Յոյսիթիւնեան և Գ. Ճուսար իրարանցուն բացատրեցին թէ օրէնքը թոյլատու է։ Ասոր վրայ ընդունուեցան Գառնակերեան և Սմբատեան եպս.ներու քուէները։

Իզմիրլեանի քուէարկութեան արդիւնքը հետեւեալը եղաւ.

77 մասնակցողներէն 73 ձերմակ քուէ և 4 սեւ քուէ։

Յետոյ ձեռնարկուեցաւ Դուրեան եպս.ի քուէարկութեան։ որուն արդիւնքը 55 ձերմակ, 22 սեւ։

Իսկ Սմբատեան Մեսրոպ եպս.ինը՝ 11 ձերմակ, 65 սեւ։

Գառնակերեան Գրիգորիս եպս.՝ 19 ձերմակ 57 սեւ։

Այս ամէնուն քուէատուները տուներէն և հայերէն տարագրերին բոլոր ներկաները։

Իզմիրլեանի անունը ծափահարուեցաւ բուռն կերպով։

Ընտրական Յեղեկագիրը որ պիտի տարագրուի վաղը, փոխարքային մասուցանելու համար պատգամաւոր ընտրուեցան Գարեգին Եպս. Սարգիսեանց, Գ. Մինաս Զերաղ և Գ. Սամսոն Յարութիւնեան։

Յետոյ հեռագիր մը պատրաստուեցաւ չնորհաւորելու Իզմիրլեան կաթողիկոսը։

Արարողութիւնը լմննալէն ետք, ամէնքը ստաքի կանգնած սկսան երգել «Թագաւոր փառաց Աստուած» Շարականը, մինչ Մայր-Տաճարին զանգակները խանդավառ կը հնչէին ծանուցանելով Հայոց Հայրապետին ընտրութիւնը։

Նկեղեցիին դռները բացուեցան, մինչ մեծաձայն կ'երգուէր «Էջմիածինն ի հօրէ» և ամբողջ ժողովուրդը, չբլակայքէն վազած եկած զանգակներու ձայներէն, գրեթէ ոչ ոք ունկնդրելու ընտրողները, օդը թնդացնելով ծափերով, ու գոչելով.

— Կեցցէ՛ Իզմիրլեան Հայրիկ, կեցցէ՛, կեցցեն պատգամաւորները ազգայինները կ'երկարձգէն ամէն կողմ, մինչ ազգին սեղանին վրայ, բաժակաճառը իրար կը գերազանցեցին Հայոց Հոր Հայրապետը պանծացնելու և Արարատեան աթոռը փառաւորելու համար։

Ա՛լ այսօրուընէ, Իզմիրլեան ընտրուած կաթողիկոսն է ամբողջ հայութեան։

Բայց...

Այս բայցը կը թարխմ թէ չատ որոշ է և կը չփոթեցնէ ամէն միաք։ Արդեօք պիտի հաստատուի՞ Զարին կողմէ։

Այս մասին տարակարծիքներ չկան գրեթէ։ Ամէն մարդ վստահ է, և ես ալ այնպէս կը հաստատ որ Զարը սիրով պիտի վաւերացնէ Իզմիրլեանը, հակառակին համար հարիւրին հինգ անգամ հաւանականութիւն չկայ։ Միայն կասկածելի էր Պոլսոյ դեսպան Զինովիէվի կարծիքը, որ իբր Օրմանեանի բարեկամ, անոր նեղշնչումով կրնար մտա մը խաղցնել, բայց ուրախութիւնամբ հոս յայտարարեցին թէ Զինովիէվ պատասխան ետ կանչուած է և ուրիշը յաջորդած իրեն։ Միւս կողմէ, փոխարքայ իշխան Տաղքով, հայերուն համակիր է և չուզեր զանազ վշտացնել։ Ասոր համար, պատգամաւորութիւնը երբ Տիդիս դառնայ, հոն պաշտօնապէս պիտի այցելէ իշխանին, չնորհաւորութիւն պիտի յայտնէ և պիտի խնդրէ որ իր համակրութիւնը միացնէ ազգին համակրութեան հետ Իզմիրլեանի համար։

Ակնկալ դուրս ալ նկատելի կէտեր կան։ Ուստ կառավարութիւնը երբէք չէ մերժած ազգին առաջին ընտրելիները։ Ասոր ապացոյցը պատմութիւնն է։ Եթէ Մակար որ երկրորդ ընտրելի էր, եղաւ կաթողիկոս, պատճառը այն էր որ Էջմիածնի հոգեւոր բակոնութիւնը և Պոլսէն ալ մաս մը հայեր դիմում ըրած էին որ ան վաստրացուի։ Այդ պարագան նոյն իսկ նշանակուած է Մակարի պաշտօնի համար արուած հրավարակին մէջ թէ «հայոց հոգեւորականներուն բաղձանքն համաձայն, կ'ընտրեմ զայն»։

Այս պահուս, Ռուսիոյ, մանաւանդ կովկաս չփոթ կացութեան մէջ է, ամէն կողմ զինուորական վիճակ հրատարակուած է։ Ամէն ցեղերու մասին կասկած ու անվստահութիւն ունի կառավարութիւնը, որ չա՞ս ապէկ գիտէ նաև թէ ինչ հակայ ուժ են հայերը Կովկասի մէջ, ի՞նչ կարող են ընել ի հարկին, և թէ զանոնք գրգռելու համար, զանոնք չցրտացնելու համար, առաջին մտածումը պիտի ըլլայ վաւերացնել, և գուցէ չա՞ս,շատով Իզմիրլեանը օրուն յուսած են ամբողջ հանրութեան աչքերու զգացումները։

Մնաց որ Ռուս բանաւորութիւնը ուրկէց պիտի վախայ իսկապէս, երբ խնդիրը իր նպատակներուն որոշ իրագործման համար է։ Իրեն համար սեղմ Կաթողիկոս մը և ընդարմանիր Կաթողիկոս մը մի՛ և նոյն են։ Եթէ իրաւունքին մը հաւանութիւնով չառնէ, բանութիւնը, բարբրոսութիւնը ինչո՞ւ սանձուելու են ուրեմն...։ Մենք տեսանք այն արդիւնքը զոր Զարդ ու փչաբ ըրեր էին, այն դանձարանին դուռը զոր խորտակեր էին Ռուս իշխանութիւնները՝ կալուածական գրաւումի բարբարոս օրերուն, տեսանք այդ սարգարդ հերոսութեան բեկորները, և ամենիկապէս աչքերնուս առջև պատկերացաւ Մեծ Հայրիկը, որ գոյութի, հեկեկանքի պատկեր մը առած, կ'ընդդիմանար, կ'ընդդիմանար. և խեղճ անհատի մը այդ տկար ընդդիմութիւնը չառ հոյակապօրէն մեծ չէր հոյակապօրէն մեծ և ամէնի իշխանութեան մը վայրագ փոքրոգութենէն։

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

Մեր թղթակիցը երկու նամակ ալ գրած է մեզի, Հոկտ. 29 և Հոկտ. 30 թուով բայց կաթողիկոսական ընտրութեան նկարագրութիւնը իր շահեկանութեան պատճառաւ այսօր իսկ հրատարակեցինք։

Վաղը մեր թղթակցին խիստ հետաքրքրաշարժ մեկ նամակը, ՕՐՄԱՆԵԱՆԱԿՍՆԵՐԸ Ի՞ՆՉՊԷՍ ՆՈՒԱՃՈՒԵՑԱՆ։

ՆՊԱՍՏԸ ՕԳՏԱԿԱՐ Է ԹԷ ՎՆԱՍԱԿԱՐ

ՀԱՄԱՑԵՆԳԻ ՄԸ ՀԱՄԱՐ

«Ու ոյն զործիցէ՝ կերիցէ մի՛»
ՊԱՒՂՈՍ

Զէյթունցին իր չբլակներով, ա՛չ թէ այս տարի, այլ ամէն տարի և միշտ խեղճ եղած է ու պիտի ըլլայ որքան ալ նպաստները չտան։ Քաղաքը Պէրզիկայ ու Սօլազտեան լեռներուն հետ հաւասարցնելու տարիքն։ Պատմաբ՝ անծանօթ չէ ամենուն։ Զէյթուն ժայռ է ամբողջ և ա՛չ թէ ժայռատ է. Զէյթունցին ուրեմն տարի վրայ ծնած, տարի վրայ մեզրահամ խառերէն է տնած և անոր բարձրադիր լեռներուն վրայ տարեալ վայրկեան է ընտիր շնորհները երկրին։ Զէյթունցին կրնար Գերիսներուն խառերովն ալ ապրիլ եթէ տաք ըլլար տեսակն։ բայց այդ խառերը եղանակի մը համար են դժբախտաբար. հացահատիկ չկրնար բուսցնել և հակառակ պարագային հող չունի, ունեցածն ալ քար ու խիճ է որով և անբեր։ Կամ ուրիշ խօսքով Զէյթունն իր չբլակներով հաւասար Զէյթունի երկու Թաղերուն կը բաւէ, մինչ անոնց կ'մնայ երկու Թաղ և տակաւին 30 հատ գիւղեր։ Զէյթունի ժայռատ երկիրը բաւականաչափ խաղող, չամիչ, ընկոյզ, բաւական կ'արտադրէ, սակայն վաճառում չկայ։ հիմա խաղողին օխան 15 փարա է որոշած որ կ'ուզես, բայց առնող չկայ։

